ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-302
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «11» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, մի կողմից, և «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պաշտոնակատար Կ. Դուրգարյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Մարդուկ-Ջարդուկ» 2 գործողությամբ բալետային ներկայացման բեմադրության իրականացման ծախսերին՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 22 -ի N 1937-Ա/2 հրամանով հաստատված ծրագրի և սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծախսերի նախահաշվի (Հավելված):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների տարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 54000.0 (հիսունչորս միլիոն) հազար դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ Կատարողի գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով,

3.3. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով

ամանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 7 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Թումանյան 54
Կառավարական տուն N 2	
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 900018001306, ՀՎՀՀ 02510673
	հեռ.՝ 010/ 52-33-82, /010/52-02-41
Պատվիրատուի ստորագրությունը	
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրենի պաշտոնակատար՝
---------- Վ. Գասպարյան	---------- Կ. Դուրգարյան
Կ. Տ.	Կ.Տ.

Հավելված
«23» «11» 2021 թ.
N ՄՇԴ-302 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Մարդուկ-Ջարդուկ» 2 գործողությամբ բալետային ներկայացման բեմադրության իրականացման ծախսերի					
1.	**Վարձատրություն (ներառյալ հարկերը), այդ թվում՝**				**9 370,0**
	Բալետմայստեր	մարդ	1	5 000 000	5 000,0
	Փորձավար	մարդ	1	1 250 000	1 250,0
	Բեմադրության և զգեստների նկարիչ	մարդ	1	3 120 000	3 120,0
2.	**Ծառայություն, այդ թվում՝**				***24 836,6***
2.1	**Դերձակի ծառայություն (բեմական զգեստներ), այդ թվում՝**				*19 480,0*
2.1.1	**Կանացի /մենապարողներ/՝**				**3 500,0**
	վարդագույն վալս	*հատ*	*2*	*160 000*	*320,0*
	տիկնիկ	*հատ*	*2*	*120 000*	*240,0*
	Կլարա /մանկական/	*հատ*	*2*	*120 000*	*240,0*
	արևելյան պար	*հատ*	*4*	*100 000*	*400,0*
	չինական պար	*հատ*	*4*	*120 000*	*480,0*
	Կլարա /ավարտի համար /	*հատ*	*2*	*160 000*	*320,0*
	Կլարա /գիշերանոց/	*հատ*	*2*	*70 000*	*140,0*
	Կլարա /փոքր աղաժոյի համար/	*հատ*	*2*	*110 000*	*220,0*
	տրեպակ	*հատ*	*2*	*100 000*	*200,0*
	իսպանական պար	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
	ձյան փաթիլներ	*հատ*	*4*	*160 000*	*640,0*
2.1.2	***Կանացի/կորդեբալետ/՝***				***7 140,0***
	վարդագույն վալս	*հատ*	*16*	*150 000*	*2 400,0*
	կանացի վերնահագուստ	*հատ*	*6*	*90 000*	*540,0*
	Կլարայի մայր	*հատ*	*1*	*150 000*	*150,0*
	հյուրեր	*հատ*	*6*	*120 000*	*720,0*
	դայակ	*հատ*	*1*	*90 000*	*90,0*
	մոդայիկ կանայք	*հատ*	*4*	*100 000*	*400,0*
	ընկերուհիներ	*հատ*	*5*	*120 000*	*600,0*
	ձյան փաթիլներ	*հատ*	*16*	*140 000*	*2 240,0*
2.1.3	***Տղամարդկանց /մենապարողներ/՝***				***3 210,0***
	վարդագույն վալս	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
	մավր	*հատ*	*2*	*130 000*	*260,0*
	պայաց	*հատ*	*2*	*100 000*	*200,0*
	Ֆրից	*հատ*	*2*	*100 000*	*200,0*
	պա-դե-տրուա	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
	Դրոսելմայեր /թիկնոց/	*հատ*	*2*	*70 000*	*140,0*
	մկների թագավոր	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
	շչելկունչիկ խաղալիք	*հատ*	*2*	*70 000*	*140,0*
	արքայազն /փոքր աղաժոյի համար/	*հատ*	*2*	*70 000*	*140,0*
	արքայազն /ավարտի համար/	*հատ*	*2*	*120 000*	*240,0*
	տրեպակ	*հատ*	*2*	*120 000*	*240,0*
	իսպանական	*հատ*	*3*	*150 000*	*450,0*
	Դրոսելմայեր	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
2.1.4	**Տղամարդու/կորդեբալետ/՝**				***5 630,0***
	մկներ	*հատ*	*10*	*100 000*	*1 000,0*
	գինվորիկներ ձիերի վրա	*հատ*	*2*	*70 000*	*140,0*
	գինվորիններ	*հատ*	*5*	*100 000*	*500,0*
	Կլարայի հայր	*հատ*	*1*	*120 000*	*120,0*
	հյուրեր	*հատ*	*6*	*120 000*	*720,0*
	մոդայիկ կանանց ուղեկցող տղամարդիկ	*հատ*	*4*	*120 000*	*480,0*
	վարդագույն վալս	*հատ*	*16*	*120 000*	*1 920,0*
	տղաներ	*հատ*	*5*	*80 000*	*400,0*
	տղաների վերարկուներ	*հատ*	*5*	*70 000*	*350,0*

2.2	**Ռեկվիզիտի, բեմական աքսեսուարների, կոշիկների պատրաստման ծառայություն, այդ թվում՝**				***4 696,6***
2.2.1	Ձիուկներ /85սմ, փայտանյութ, գործվածք, 3D պլաստիկ նյութ	հատ	8	50 000	400,0
2.2.2	Ձինվորներ /70սմ, փայտանյութ, ակրիլ ներկերով նկարչություն/	հատ	2	20 000	40,0
2.2.3	Թնդանոթ /200սմ, փայտանյութ, մետաղ/	հատ	1	300 000	300,0
2.2.4	Մկների թագավորի գլուխ /3D պլաստիկ նյութ/	հատ	2	45 000	90,0
2.2.5	Ձիավորներ /150սմ, փայտանյութ, գործվածք, 3D պլաստիկ նյութ/	հատ	2	120 000	240,0
2.2.6	Մկների գլուխ /3D պլաստիկ նյութ/	հատ	10	45 000	450,0
2.2.7	Ձեռնափայտ /փայտանյութ/	հատ	2	9 300	18,6
2.2.8	Կեղծամներ՝				***1 172,0***
	կանացի	հատ	16	31 000	496,0
	տղամարդու	հատ	16	31 000	496,0
	շինյոն	հատ	12	15 000	180,0
2.2.9	Գլխարկներ	հատ	41	15 000	**615,0**
2.2.10	Կոշիկներ՝				***860,0***
	կանացի	զույգ	16	20 000	320,0
	տղամարդու	զույգ	27	20 000	540,0
2.2.11	Երկարաճիտ կոշիկներ /տղամարդկանց/	զույգ	11	35 000	***385,0***
2.2.12	Հողաթափեր՝				***126,0***
	կանացի	զույգ	22	3 000	66,0
	տղամարդու	զույգ	20	3 000	60,0
2.3	**Կլավինովայի /էլեկտրոնային դաշնամուրի/ վարձակալություն**	օր	4	165 000	660,0
3	**Նյութածախս, այդ թվում՝**				***3 978,4***
3.1	**Ռեկվիզիտ**				**105,4**
3.1.1	Թմբուկ /55*30սմ/, 1 հատ՝				***17,5***
	փայտանյութ	մետր	0,25	10 000	2,5
	գործվածք ատլաս	մետր	1,5	5 000	7,5
	տիմա	մետր	5	500	2,5
	փայտիկներ	հատ	2	1 000	2,0
	սփրեյ	հատ	2	1 500	3,0
3.1.2	Նվերների տուփեր 13 հատ՝				***69,0***
	ստվարաթուղթ /70*100սմ/	լիստ	20	900	18,0
	փաթեթավորման թուղթ /60*80/	լիստ	30	800	24,0
	ժապավեն գունավոր	մետր	50	500	25,0
	սոսինձ	կգ	2	1 000	2,0
3.1.3	Տորթ 1 հատ /75*35սմ/՝				***16,9***
	փրփրապլաստ	մ³	0,3	20 000	6,0
	ստվարաթուղթ	լիստ	1	900	0,9
	ժապավեն	մետր	10	500	5,0
	ակրիլ ներկեր	տուփ	1	5 000	5,0
3.1.4	Կախարդական փայտիկ, 1 հատ՝				***2,0***
	փայտե ձող	մետր	0,5	4 000	2,0
3.2	**Կոշտ դեկորացիա**				**924,0**
3.2.1	Տոնածառ /աճող/				*924,0*
	երկաթե խողովակ /20x20 մմ/	մետր	22	1 000	22,0
	փայտանյութ /0.4 մմ/	հատ	2	10 000	20,0
	գործվածք ատլաս	մետր	55	3 000	165,0
	կպրող քար, էլեկտրոդ, պտուտակներ				6,0
	նիտրո ներկ	լիտր	1	2 500	2,5
	լուծիչ	լիտր	2	1 000	2,0
	պողպատե լար, կախիչներ, ամրակներ				3,5
	տոնածառի արհեստական ճյուղեր	հատ	60	5 000	300,0
	էլեկտրական լարեր	մետր	60	300	18,0
	լամպեր մոմերի տեսքով	հատ	50	500	25,0
	էլեկտրական սարք՝ լույսը կառավարելու համար				20,0
	տոնածառի խաղալիքներ	հատ	60	1 000	60,0
	տոնածառի լույսեր	մետր	50	1 000	50,0
	լեսկա/ ձկան թել/	կապ	1	6 000	6,0
	գործվածք պարչա	մետր	2	5 000	10,0

	ակրիլ ներկեր /արծաթ, ոսկի/	*կգ*	*1*	*14 000*	*14,0*
	աշխատանք				*200,0*
3.3	**Փափուկ դեկորացիա**				**2 949,0**
3.3.1	Կուլիսներ /IV պլան 8 հատ 1000x300 սմ/				1 000,0
	գործվածք գաբարդին	*մետր*	*320*	*1 500*	*480,0*
	գործվածք դիագանալ	*մետր*	*24*	*3 000*	*72,0*
	պարան	*մետր*	*160*	*200*	*32,0*
	փիսմա	*հատ*	*24*	*500*	*12,0*
	լյուվերս				*4,0*
	աշխատանք				*400,0*
3.3.2	Կուլիսներ սև /8 հատ 1000x300 սմ/				1 000,0
	գործվածք գաբարդին	*մետր*	*320*	*1 500*	*480,0*
	գործվածք դիագանալ	*մետր*	*24*	*3 000*	*72,0*
	պարան	*մետր*	*160*	*200*	*32,0*
	փիսմա	*հատ*	*24*	*500*	*12,0*
	լյուվերս				*4,0*
	աշխատանք				*400,0*
3.3.3	Պադուգա /4 հատ 19x3 մ/				949,0
	գործվածք գաբարդին	*մետր*	*240*	*1 500*	*360,0*
	գործվածք դիագանալ	*մետր*	*80*	*3 000*	*240,0*
	պարան	*մետր*	*200*	*200*	*40,0*
	փիսմա	*մետր*	*80*	*500*	*40,0*
	լյուվերս				*4,0*
	աշխատանք				*265,0*
4	**Ապրանք, այդ թվում՝**				**1 865,0**
4.1	Թրեր	*հատ*	*5*	*6 000*	*30,0*
4.2	Տիկնիկներ /60-65սմ/	*հատ*	*4*	*30 000*	*120,0*
4.3	Վզնոց	*հատ*	*65*	*7 000*	*455,0*
4.4	Թագ	*հատ*	*30*	*8 000*	*240,0*
4.5	Հովիար	*հատ*	*6*	*10 000*	*60,0*
4.6	Զուգագուլպա /կանացի/	*հատ*	*60*	*8 000*	*480,0*
4.7	Տրիկո /տղամարդու/	*հատ*	*60*	*8 000*	*480,0*
5	**Ճանապարհածախս, այդ թվում՝**				**300,0**
5.1	Ավիատոմս /Սանկտ Պետերբուրգ, Կիև-Երևան-Կիև,Սանկտ Պետերբուրգ/	*հատ*	*2*	*150 000*	*300,0*
6	**Կեցության և սննդի ձեռք բերման ծախսեր, այդ թվում՝**				**1 400,0**
6.1	Կեցություն /2 հոգու/	*օր*	*80*	*17 500*	*1 400,0*
7	**Տպագրական ծախսեր, այթ թվում՝**				**3 250,0**
7.1	Դեկորացիայի տպագրություն /գաբարդին գործվածքի վրա տպագրություն/	*մ²*	*650*	*5 000*	*3 250,0*
	Ընդամենը ծախսեր				***45 000,0***
	ԱԱՀ*				***9 000,0***
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ				**54 000,0**

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի
և բալետի ազգային ակադեմիական
թատրոն» ՊՈԱԿ
Երևան, Թումանյան 54
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001306, ՀՎՀՀ 02510673
հեռ.՝ 010/ 52-33-82, /010/ 52-02-41
Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Կ. Դուրգարյան
Կ.Տ.